

դէկ համարումն ունենայ իր բնութեանը վրայ :

Երբոր իրեն պէտք եղած համարումն ունենանք մարդուս վրան , երբոր տեսնենք թէ անդադար դէպ 'ի անսահման կատարելութեան կը դիմէ , երբոր կը տեսնենք որ մարդս աւելի իմանալի և անմահական կենաց համար եղած է քան թէ աս քանի մը օրուան կենաց համար՝ ուր բուսոց և կենդանեաց պէս նիւթական աշխարհիս օրինացը տակը կապուած կ'երևնայ , — երբոր կը տեսնենք որ գէթ կրնայ անասնոց խումբէն դուրս ելլել ու ըսել , “ Եւ ձեզմէ ալ ու չորս դիւս եղած ամէն երկրաւոր բաներէն ալ վեր եմ , ” — կ'իմանանք որ սրտերնիս կը սկսի նետել , ու մարդկային բնութեան վրայ սէր կը կապենք : Եւ չուան իր խեղճութիւններն ալ , ինչուան իր մոլորութիւններն ալ աւելի գութերնիս կը շարժեն վրան՝ մտածելով որ ինչ սքանչելի արարած է : Եւ ցաւինք որ արարածոց թագաւորը ինքզինքը անարգեր է . կը ջանանք կ'աշխատինք երբեմն որ գգուշութեամբ պարտկենք իր պակասութիւնները , երբեմն ձեռքերնիս կ'երկընցընենք ու ցեխէն դուրս կը հանենք զինքն որ նորէն հասնի ան բարձրութեանը ուսկից որ ընկեր է . կը ցնծանք ուրախութեամբ ամէն անգամ որ կը տեսնենք թէ ինչպէս իր մեծութիւնը միտքը բերելով՝ անյաղթելի քաջութեամբ կը պատերազմի ցաւոց և նախատանաց դէմ , կը յաղթէ նաև ամենամեծ դժուարութիւններուն , և կամքին բոլոր ամենազօր ուժովը կը մօտենայ իր աստուածային գաղափարին :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Պետերգոյ Վանից նկարագրութիւն  
ԲՔԷԼՍ արդապետի յիշատեանց՝ մահանի  
Եւ միտքայ :

ԲԱՋՄԱՎԷՊ օրագրիս բարեսէր ջանքը և դիտմունքը որչափ հաճոյ և սիրելի ըլլալը բարեսէր և աննախանձ անձանց՝ սկսան վկայել մեր ցանկալի հայաստան աշխարհին նուիրական քարերն ալ . կանգուն և կիսականգուն սրբազան շինուածոց մէջէն խորին հաւաքաձայն արձագանգ մը լսուեցաւ Պետրական ծովածոցուն հայաբնակ կիտին վրայ . և սրբազնագոյն յիշածնաւ ջի տաճարէն և հայրենաւանդ դիւանէն անցած՝ մտերմական և բանասիրական ջանից արգասիք ընծայուեցան մեզի : Պետրոսեան Պօղոս վարդապետին հայրենական և ուսումնասէր եռանդը՝ օրինակ և յորդոր եղած է Եւ միտքին երթալէն վերջը՝ տեղւոյն միաբանիցը , ինչպէս բանասէր ԲՔԷԼՍ արդապետի յիշատեանց , Յովհաննէս Սարգսյանի արդապետի ԲՇԱՐՈՆԵՆՈՅ , Սարգսյան Սարգսյանի ( ) ձեռքով . որոնք մեր աշխարհին զանազան կողմերը պտըտելով՝ աշխարհագրական տեղեկութիւններ գրել են , և նոյն Պետրոսեան Պօղոս վարդապետին յանձներ են , որ իր համաջան բանասէր պարօն Սերովէէ եղբօրը ձեռք մեզի հասուց , և մենք յօժարութեամբ կը հրատարակեմք Բազմավիպիս մէջ , ինչպէս որ մասնաւոր փափագանօք ալ կը խնդրէ . բերդողաբան ազնիւ յիշատեանց ԲՔԷԼՍ վարդապետը , որուն ըրած գեղեցիկ նկարագրութիւնը Պետրոսեան վանից և սահմանակից տեղեաց՝ օրագրիս մէջ հանդիպած սխալը ուղղելով , ահա կը գնեմք հոս . ուրիշ տեղի թողլով նոյն Պետրոսեան վանից և

Պատճառով վրայ ուրիշ գիտելիքն ալ՝ որ Տիւպուա Պապիգիացի ճանապարհորդէն ունիմք՝ հանդերձ Տրդատայ հովանոցին աթենանման զարմանալի շէնքին պատկերովը :

Յարգի ուսումնական հոգեկցորդ Էշէայր :

Պարոն Սերովէ Գեարդեան :

ՕՒՆԱԶԲԱԿԱՐՕՏ փափագանացս իղձ այս հինգերորդ ամէ , զի ցուցանէ արգարև մեր և մերոյ ազգի ողջոյն Նազմալէպ օրագիր , աշխատութիւն սրբոյ Սիստին Սիսիթարեան , յիւրն հայերէն աշխարհաբառախօս լեզու . գեղեցիկ յառաքինութեանց նոցին 'ի պէտս ազգիս 'ի դաստիարակութիւն մանկանց՝ յուսմունս ազգիազգեացն գիտութեանց , զորս պատուականն աւանդէ օրագիր :

Ս աղուց այնմ տանէի սպաս ընդգրկեալ ինձ 'ի մտաց պարապումն զհայրենականն իմ լեզու՝ ընդ օտար աստեղօք որպէս անդր վկայի՝ զարգացեալ յիմոց համազգեաց , առ 'ի քաղցրացուցանել այնմ վերստին զիւրն հայրենիս , ուստի խորթացեալ : Այլ ցաւ անբուժելի յոյժ . զի չեմ նորա զամս երեք հիւրեալ առ իս՝ և չեմ ևս իսկ դիւրընտել աչացն արարեալ զիւր հոգ ծննդական՝ զարձառ առ յինէն և արգել զոտս իւր 'ի սեմոց իմոց , ոչ ևս զայն աշխոյժ ոգւոցն հայրենի հոգւոյն բարբառ արժանաւորեալ յականջս իմ . դարձաւ , և զչուն իւր երկարածիգ ամիսփեաց յիւր կայան , անշուշտ զականողիս սլուցեալ զհետ ,

“ Ի՞նչ յաճոյ յարեմն իմ վերայեալ , ” :

Ինչեալ էր արդէն ամբ երկու ևս 'ի վերայ , յորժամ հնգերեակն յեղբարս՝ յանախնկալեաց մուտ արար առ իս , զոր մէ ևս ինքն 'ի տրտունջ . որ թող , զի ցայս վայր սուրբ արար զօտնամուտ իւր ընդ իմով յարկաւ , այլ և զերեցան իւր ևս ուղւոյ առ մեզ ոչ արար . զինչ ինչ էր առնել՝ և ոչ արարաք 'ի դիւրել զընթացան . այլ և այնպէս զլացաւ մեզ

բաղդն . զի և յառաջին աւուրս ստանալոյ մեր զնոյն , յանցանել վեց ամսոյ , հազիւ ուրեմն առաջինքն հասաներ 'ի ձեռս . և մերթ ևս զամն իսկ ողջոյն զրկեաք 'ի նմանէ . յորում և մանկտիք անգամ մերձաւորք տեղեալ սուրբ ուխտին՝ նախ քան զմեզ լինէին բազմավէպք . իսկ մեք որ առ հայրենի սիրոյն բարգաւաճանաց կամաւ 'ի նոյն ըղձակերտ՝ ամիսփեցաք յոչ կամաց զձեռս :

Խորհուրդք այսպիսիք ծփային յիս ցարդ . այլ առադաստ ուղւոյ ընթացից ոչ պարզէին ինձ լի հողմով յաջող բեռնաւորել տրտունջ զայսպիսի 'ի նաւահանգիստ անդր , ուր կայան է Նազմալիս . անդր՝ ուր “ Կոջն 'ի ծփին որմոցն գայ ալեշատ , ” անդր՝ ուստի և ապա զնէ նա 'ի վերայ ջուրցն մկանանց անցեալ ընդ Ս սբորոն (Վրասիոյ՝ գայ իջանէ ընդ հայրենեացն լերինս՝ յողջոյն Նարարատայ , որում իբրու ծննդականն մօր զառամելոյ՝ խոնարհեալ են աչք 'ի տեսանել՝ և ականջք 'ի լսել . լսել , իբր ոչ եթէ առ վերջնով սրածութեամբ բազմամարդ քաղաքին զառն իւրաքանչիւր գաղթելոյ խառնաձայնութիւն , այլ զորդւոցն տարիաւորաց ելելոց 'ի մայրենի ծոցոյն գգուանաց առ նովին գաղթականութեամբ 'ի սփիւռս Ս նիժոյ՝ զգարծիցն ձայն արդէն աւետարանեալ ըստ բանին , յուրախութիւն մեծ հայրենասէր ոգւով վառելոցն :

Բանի ցանկալի էր մեզ անընդհատ յարատեւութիւն օրագրին յայս նահանգ հայրենի . յորմէ առեալ զգրացեացն վէպս և զեղբարց հայրենակցաց բանասիրականս 'ի լուր , զմերն երկրի՝ որում ցանկայ , ոչ յանտոհմիկս ապաքէն զլանայաք շնորհել 'ի նիւթ . ըզմերն երկրի , որում ցանկան երկրացիքն ընդ համօրէն ազգին 'ի տեսութիւն՝ զընդարձակ աշխարհիս մերոյ 'ի սփիւռս՝ կոյտս կոյտս աւերակաց , ըզհոյակապ քաղաքացն շինութեանց մշնացուածս , զքարագործ դրուագս ճարտարարուեստ մատին . աստ զկիսակոր-

Ժան տաճար, անդ զսիւնսն ճախարակեայս՝ ի մամուռս դերբեկաց, . եթէ կամիցին, և զՀայոց զարմացուցիչն տեսողաց՝ զԼճիւննաց զգործին տաճարսն փորուածոյս ի լեռնակարկառ բլուրն ահագին . զոր եթէ իշխեմասել, զեթրն հրաշալեաց զմին . և որ ի դարուց անմահացեալն՝ զմեծի Լճային Տրդատայ զՀովննոցն մահարձանօք ի սարսուռոյթս ամրոցի գիւղաքաղաքին Ղառնուոյ, և զայլոց աստուածայնոցն տանց աշխարհիս մերոյ, անզուգական թուեցելոց Լճրոպացւոցն աշխարհատեսաց . յորոց զմանց տարածայն իմն ընթերցեալ ի ծանօթութեան ազգային երգոցն ի հինգերորդ հատոր Բազմավիպին երես 95, կարի անհրաժեշտ պարտք ի վերայ եղան գալ ի խոստացեալս . և յայտ առիթ զնշանակեալ իմ տրտունջ յիշատակել առ ( ) րազիրն :

Իբր զի ասի անդ . “ Եւմիածնայ մօտ՝ Երբի գեղին արեւելեան կողմը գեղ մը կայ՝ Եղիվարդ կամ Եղվարդ անունով . ասոր քովը աստեղով վանք մը կայ եղեր, որ հիմա աւերակ է, և հոն կը պահուէր, կ'ըսեն, Վրիստոսի գեղարդը . անոր համար վանքն ալ՝ գեղն ալ սուրբ գեղարդը ըսուեր են, ու ետքը Եղվարդ : Իսկ Սուղնի կամ Սուղլու սուրբ Վեորդ և այլն ” :

Այս առնելով զայն ի քննութիւն, մեք ըստ խոստման մերում կարգեմք զստորագրութիւնս յիշատակելոցն ի վերոյ . որովք և պարզեցի ծանօթութիւնդ, եթէ Եղուարդն՝ ոչ է Վեղարդայ վանք . և ոչ առ Եղուարդալ Վեղարդ . որպէս և ոչ միում անուն փոխանցեալ ի միւս . բայց և զայս ևս խոստովանիմք, զի եթէ գուցէ յետոյ այնմ արարեալ իցեն զկրկին ծանօթութիւնս, զայն մեք ոչ գիտեմք առ ի չգոյէ առ մեզ Բազմավիպին :

Եւ ըստ որում յանցեալ ամի հանդիպեալ ի վանս Վեղարդայ որ Լճիւն վանքն, և ի Խորվիրապ, առաք մի առ մի զստորագրութիւնսն, առ այն յաւելաք և զստորագրութիւն Հովննոցին Տրդատայ յամրոցն Ղառնուոյ, որ ոչ գոյ

ի տպագրելումն, և զինչ ինչ զրից լեռանց և դետոց Լճրարատեան դաշտիս, ընդ որս անցանել էր մեզ :

Ի տասներորդումն աւուր սեպտեմբերի ամին անցելոյ, ելեալ զգործորդ ժամու աւուրն ի կաթուղիկէ մայր եկեղեցւոյն՝ աղարշապատայ “ Բնդ դուռն հարաւոյ ըստ պատմագրին, ընդ կողմն պողոտային որ հանէր ի Սեծամորի կամուրջն, . ժամն իբրեւ երկուս դիմեալ յարեւել հարաւոյ Եւմիածնի՝ անցաք ընդ հրազդան, և մտեալ ի Ղառնուոյ գաւառն, դէպուղիդ գնացաք ի վանս Խորվիրապայ . յերրորդ ժամու գիշերոյն ժամանեցաք անդր ի ծայրի սպառուածի լայնանիստ դաշտին Ղառնա, . յորում մերն Լճրաշատ ի հնումն մերձ Երասիս յանդիման սրբազան լեւին Լճրարատայ որ ձգէր ի հանդիպոյ գրեթէ զստորոտ իւր առ ամիս գետոյն . տեսարան գեղեցիկ, որ ի մթութեան գիշերոյն ընդ ճառագայթս աստեղաց յոտից ցկատարն նշմարէր կիսով ի ձիւն սպիտակ : Բնդ տիրէր լուութիւն ի համօրէն բնութեան . և գետն իբրեւ ծովու մեռելոյ լուէր զխօխոջ իւր ի դարափոսս դաշտին և ի շամբս շամբս խորափտէր միայն . և ուր ուրեք յերեսս դաշտին երկարէր, անդ և զդէմն իւր ոչ զլանայր մեզ արծաթափայլ պաղպաղելովն . անդ և մեք ուղղեցաք ի վանացն կոյս ընդ հարաւ . անցաք ընդ մէջ երկուց բլրոցն, ընդ հորիզոն՝ աղարշապատայ յարեւելից հարաւոյ նորա, ի ծայրս երկրորդին նշմարելով զգմբէթ եկեղեցւոյն յարեւելից . և ընդ զառ ի վերն գնալով ընդ ափափայս և ընդ սուրուտս քարանց, մտաք ի վանս, որ զիրկս բացեալ ունելով, ընկալաւ զկարօտեալսս ի համբոյր և յուխտ երկրպագութեան :

Ի վաղիւ անդր վաղ քաջ ընդ արեւագալն կատարեալ զսովորական ժամեր գութիւն, բոլորասիրտ ջերմեռանդու

1 Ստորագրութիւն Եւմիածնի և հինգ դուռնաց Լճրարատայ, երկհատոր տպեալ Եւմիածին, ի Բովհաննէ Եպիսկոպոսէ Շահխաթունեան :

2 Լճրաթանդեպայ :

Թեամբ խոնարհեալ 'ի համբոյր մասանց սրբութեան, խուռն բազմութիւն, զի էին ընդ մեզ ուխտաւորք, դիմեցաք 'ի միւս եկեղեցին բազմաւ փափագաւնօք յերկրպագութիւն, ուրանօր խորվիրապն էր : — Այսօրիկ եկեղեցիք ըստ այսմ օրինակի :

Այկեղեցին մեծ 'ի կեդրոնամիջի մենաստանին, շինեալ քառակուսի համակ կոփածոյ քարամբք, ունի զմի սեղան և զերկուս խորանս յաջ և յահեակ ըստ հայաստանեայց սովորութեան. և զգմբէթ 'ի միջավայր տանեացն գոյնզգոյն քարամբք. 'ի զլուխ արեւմտեան դրանն ունի զզանկակատուն սինազարդ 'ի վերայ կամարակապ դաւթի տաճարին 'ի չորից սեանց ձեւացեալ :

Իսկ տաճարն որ 'ի վերայ Սիրապին է 'ի հարաւոյ մեծի եկեղեցւոյն անկեալ օրոցաձեւ այնպէս, զի պարիսպք յերկուց կուսէ գան և միանան 'ի հարաւային որմն նորա : Այկեղեցին ունի զմի սեղան փոքրիկ ըստ փոքրիկութեան իւրում. և բերան վիրապին առաջի սեղանոյն 'ի հարաւոյ. ուստի ձգեալ է ընդ դուռն նեղագոյն՝ սանդուղ ցլատակ նորա քսան և հինգ աստիճանաւ 'ի խոնարհ, ընդ որ իջանէն երկրպագութիւն : Այս վիրապ ըստ ճիշդ զննութեան է նոյն իսկ յատակ եկեղեցւոյն՝ բոլորաձեւ քարաշարեալ վերուստ մինչ 'ի վայր, որպէս ասացաւ քսան և հինգ աստիճան 'ի խոնարհ. և արտաքուստ առ 'ի հաւասարել զանհարթութիւն տեղոյն ցլատակ պարսպին՝ նոյնպէս քարաշար բոլորաձեւ որմն նորա. որոշ կայ, որ ձեւացուցանէ զկիսաբոլորս Սիրապին. բայց այս որպէս երեւի, 'ի նորոգութեան ժամանակին՝ նորոգեալ են յայս ձեւ. և լցեալ գրեթէ կիսով չափ զխորութիւնն, զի այժմեան յատակ նորա հաղիւ ուրեմն հասանի ցկիսաբաժին բլրոցն բարձր քան զերեսս դաշտին մին.

1. 'Նորոգութիւնն է յամին 1661. ըստ արձանագրութեան. "Յիշեալ լիցին առաջի Քրիստոսի խօսքայ Սիմոն . . . և իւր նիշնցեալքն, որք նորոգեցին զՍիրապս. յամին 1661, յԱսորագրութիւն Էջմիածնի, հատոր Բ. երես 280 :

չև ցերեսուն կանգուն. եթէ չմակարէրեմք այսպէս ըստ երեւութին, ոչ կարեմք հաւատել զասացուածս պատմագրին. ուր "Ամենեքին մեռեալ լինէին, ասէ, վասն չարաշուք դառնութեան տեղոյն, վասն կարակում տղմոյն և աւճախառն բնակութեանն և խորութեան :

Պարիսպ վանացս կանգնեալ հաստատուն բրգամբք յաւուրց նորոգութեանն, էքառակուսի. դուռն մի ունելով յարեւելից. սենեակք միայնակեցաց են 'ի հիւսիսակողմն պարսպին՝ կամարայարկք. իսկ որ ենն յարեւմտից՝ տնտեսատուն և շտեմարանն և այլք, են փայտածածկ :

Այս յիշատակ հաւատոյ անջինջ տպաւորեալ 'ի հոգիս զառ 'ի նախնեացն մերոց ընդ դարս բազմաժամանակեայս անցեալ, և զսրբոյ և մեծի նահատակին հայաստանեայց՝ մերոյ հոգւոյս Սուսաւորչի զհնգետասանամեայ աղօթիցն վայր, որք գետօրէն հորդէին զարտասուս աչաց մերոց 'ի հոգս իւրեանց. առատաձեռնեալ 'ի նոսին ըգտուրս ողորմութեան, իբրեւ ժամ չորրորդ էր աւուրն, յուղի անկաք անտի ընդ հիւսիս մինչև ցայն տեղին, ուր յերեկոյի դարձուցեալ էաք զերեսս 'ի հարաւ : Տեսանէաք արդէն զգետն 'ի զատ վազեալ 'ի լեռանցն Վեղամայ 'ի ծործորս հովտաց, ուր 'ի մէջ ծառոցն խտացելոց երկուստեք խոխոջաձայն իմն 'ի թափն իւր ոստնոյր. և 'ի մուտս մեր 'ի ստորոտս երկարաձիգ լեռին՝ յողջոյն մեր զրեթէ իջանէր 'ի ձորոյն. անդ ոգի առեալ առ վայր մի՝ փոխանակեցաք օդս լեռնականս՝ ընդ օդս ճախնայինս Արասիայ և Սեւծամբուրոյն, որ փոքր մի յառաջ զդէմն հարկանէր տօթակէզ շոգւոյն 'ի սփիւռս անեղեր դաշտին : Այտի կալեալ զձանապարհ ընդ ձորամէջն երկուստեք լեռանց յերկայնութիւն գետոյն ընդ հիւսիս, և անկեալ 'ի պտոյտս նորա՝ անցանէաք մերթ յայտ և մերթ յայն կողմն ջրոյն. այսպէս յառաջ անցեալ 'ի լեռինս որ բոլորէին զհովիտս գիւղաքաղաքին Վառնոյ :

տեսանէաք յարևելից գետոյն գօտիք լերանց 'ի բլուրս բլուրս աղխաղխեալք . և 'ի նոսա զգարմանազան տեսիլ բնութեան . թերևս նորօք յատելութիւն ընդ մեզ բերեալ ազգացն դրացեաց և զախտաւոր աչան շարժեալ՝ ձեռաց 'ի ձեռս յափշտակել զմերն Հայաստան . վասն զի յիշատակեալ բլուրք այնոքիկ ամենեւին բուսամերկք իբրև 'ի ձմերայնի , հարկանին յայլ և այլ երանգս գունոց , ոմանք 'ի կապոյտ , ոմանք 'ի կանաչախառն ամպագոյն . և որ մեծն 'ի նոսին՝ սիղացեալ 'ի ծայրս երկուս՝ երևի 'ի դեղնախառն կարմիր . յորոց և պիծակք փայլունք 'ի ճառագայթիցն արևու յաչս յանցաւորաց հարկանէին անտի 'ի գետափանցն . որք և երևէին 'ի տեսիլ ոչ միապաղաղ մարմինք , այլ գրեթէ շեղակոյտ յաւազոյ առ 'ի վկայ անշուշտ մերոց հայրենի հարստութեանց 'ի բոլս հանքաց և յալգս յաղգրս մետաղաց . զորս յոչ զլանալոյ բընութեան 'ի ծոց իւր յաւիտենից սնուցանէ Հայաստան՝ յերջանկաւետել զապագայ որդիս : Այլ ընդ այս լացցուք հայրենեացս որդիք . զի ահա՛ գանձք հայրենիք 'ի հողս մեր աւանդեալք , մեք ձեռնունայն 'ի սնանկութիւն և յաղքատութիւն բերիմք :

Ենդ 'ի խոնարհել արևու 'ի հորիզոն իւր և յինքն ամփոփել զճառագայթս , երևեցան գլուխք լերանցն , յորոց վտակ առ վտակ գեան ընդ քաղաքս յառաջանայր 'ի ձորամէջ անդր յարևելից դաշտին . յորում և 'ի գետափն կոյս՝ Վառնի գիւղաքաղաք , կամ լաւ ևս՝ լայնաձիգ աւերակացն գերբուկք , յորս և Տրդատայ Հովանոց . անդ խորդք և ցիւք վայրենիք . անդ և բուն գիշերախօս յարձագանգս ձայնարկու ընդ տարածանիլ բողոյ գիշերոյն՝ յողորտս երկրին . թէ և տունք ոմանք 'ի Հայոց թուով յոյժ սակաւ՝ 'ի հիւսիսային ծայրս քաղաքին բնակաւորք : Եւ սոսա իջաւանս արարաք ընդ կէս ժամու գիշերոյն . չե ևս կարացեալ ժամանել ընդ զառի վեր Երեւանացն , ուր կացուրդն է սրբոյն Սահակայ ,

ըստ պատմութեանն՝ 'ի ծործորս լերին Վեղամայ . ուր և երանել իսկ կամեաք յերկրպագութիւն : Եւ զի հռչակեալն Հովանոց 'ի սարևանդս բլրոյն մերձ 'ի գիւղ պատեալ էր յաւերակաց քաղաքին , իջանել նմա 'ի զնին՝ հանգեալ անդէն զայն գիշեր :

Եւս յառաւօտու 'ի ծագել աւուրն , դիմեցաք անձկանօք 'ի գլուխ խորածորոյն՝ 'ի զնին արբունեացն Տրդատայ՝ ցայս վայր հրաշացելումն 'ի բանս Խորենացոյ . և ահա տեսաք զդուռն Լճոցին , որոյ երկուց սեմոց միակտուր քարինք եւեթ էին կանգուն , և կամարքն անկեալ առ տեղեաւն մամուապատ 'ի հող ընդ շրջապատ ամրոցին . վէմք միայն մեծահատորք յաջ և յահեակ տապաստ դնէին մի 'ի վերայ միոյ 'ի հիմնատեղիսն . մտեալ յաւերակս Հովանոցին , արտասուք կալաւ զմեզ 'ի տեղւոյն , զոր մերս արքայ Տրդատ՝ « Կատարէ երբեմն որձաքար և կոխածոյ վիմօք երկաթագամ և կապարաւ մածուցեալ . յորում շինեալ և տուն հովանոց մահարձանօք՝ սքանչելի դրօշուածովք բարձր քանդակօք 'ի համար քեռ իւրոյ . գրեալ 'ի նմա և զյիշատակ իւր հելլենացի գրով » :

Եւս հովանոց է յարևելեան ծայրի ամրոցին 'ի գլուխ խորածորոյն . երկայնութիւն և լայնութիւնն հաւասար ըստ բոլորակութեան , խոնարհեալ է շինութիւնն բովանդակ որպէս յիշատակի 'ի պատմութեան յամին 1679 . որ էն առհասարակ վէմք մեծամեծք կոխածոյք դրուագեալք և քանդակագործք՝ « սքանչելի դրօշուածովք » , ընդ որս և եւրոպացւոցն հիանան ճարտարք . վասն զի անհնարին թուի տեսողաց զայնպիսի քարինս առն մահկանացուի շարժել 'ի տեղւոյն , թող թէ վերածել յայնպիսի անմատչելին վայր : Վոյնք քարանցն հարկանին 'ի կանաչախառն կապոյտ . որոց այնքան մաքուր և կենդանի են նկարք , մինչև կարծել այժմ իսկ արուեստակերտեալ . զի ոչ էն այնոքիկ իբրև զայլս 'ի հնութեանց աշխարհիս բորբոսեալք և մամուապատք 'ի գեր-

բաւկս, այլ անհամեմատ և անզուգական դրուագք են, արդարեւ սքանչելիք. պարզապէս երեւին 'ի նոսա վէմք ինչ, որ 'ի տեղի որմոց յիրեարս կապարաւ մածուցեալք են յապացուցութիւն բանից պատմաբանին. այսոքիկ ունին տասնէհինգ թզաչափս յերկայնութիւն, և 'ի լայնութիւն՝ եօթն, և երեք 'ի ստուարութիւն. որոց վերին կողմանք ծայրէ ծայր կռածոյք են իբրեւ զաւաղս. և ծաղկանկարքն խորափոր կերպակերպ դրուագեալք. և ոմանց ներքին կողմանք գծեալք յերկայնութիւնն, առ որովք նկարք մանուածոյք ոչ իբրեւ միւսոցն խորափորք. այսոքիկ իսկապէս երեւի թէ էին կապարաւ և երկաթադամ յիրեարս մածուցեալ շինուածքն՝ անխառն յայլ ամենայն նիւթոյ. զի տեղիք կապարացն մինչ ցմատնաչափ մի խորագոյնս փորեալ են ուրեք ուրեք յեզերսն՝ հաւասար հեռաւորութեամբ:

Ահա տեղեան՝ թող զայլ անշուանս, համարեցաք մինչ և երկոտասան խարխիս սեանց՝ մի և նոյն դրուագով, գունով և քանդակագործութիւնք, այնքան ճարտարագործք, մինչև ոչ կարեմ գոթացի կամ կորնթեան անուանել. միայն 'ի ցոյց գուցէ հայոցն հմտութեանց 'ի ճարտարութիւնս, զնկարս միոյ 'ի խարխիսացն ստորագրեցից, զի նովաւ և այլքն իմասցին. Ներքին կողմն խարխիսն քառանկիւն գոլով, վերինն աւարտի 'ի ձև բոլորչի. 'ի չորեսին դէմ վիմին՝ փունջ բազմատեսակ ծաղկանց, կապ ունելով 'ի միջավայրին՝ կողմնակի անկեալ ընդ լայնութիւն դիմացն. 'ի ներքոյնորին այլ խորանք ծաղկանց հիւսեալ իմն ձևով 'ի խորշս խորշս. որոց տերեւք ձևացուցանեն զանկիւնսն 'ի վայր. սիւնք որ լեալ են 'ի վերայ այսոցիկ, խառն զնին 'ի փլուածս քառանցն՝ մինչ ցերկոտասան ոտնաչափ երկայնութեամբ միապաղաղ և գլանաձև. Այս հատուածք քարանց ամենեքին ևս ունին 'ի ճակատուց զշրջանակս ծաղկանց. յորոց և յոմանս՝ դէմք առիւծուց 'ի նկարսն: Առ տեսաւ 'ի նոսին

գիր հելենացի. գուցէ 'ի թաղեալսն. Հարեւելից կողմն հովանոցին չերեւին հետք պարսպի ամրոցին. և ոչ իսկ ընդարձակութիւն ընդ ձորն և ընդ հովանոցն. զի անտի անմիջապէս է զառիւ վայր գետոյն՝ անհնարին խորութեամբ:

Երկուս 'ի խարխիսացն յիշելոց, ոչ վաղ ժամանակք են, յորմէ հետէ քաղաքապետն Նրեանայ եբեր անդր իբրեւ հնութիւն հինաւորոց դարու. որք այժմ եղեալք են առ դրան քաղաքական ուսումնարանին. առ որ ինդրեաց 'ի վանաց մերոց Ռուս աստիճանաւորն զծանօթութիւն. բայց համառօտ ինչ տուաւ: Եւ թէ և ազգայինք ազատեցեն զազգային հնութիւն փառաց հայրենեաց՝ 'ի հնութենէ ժամանակին. այլ երկնչիմ, թէ չև ևս զարթուցեալ հայրենասիրաց 'ի սոյն, այնոքիկ աւանդք հայրենիք, այն նշխարք դոյն մնացուածոց փառաց հայաստանի՝ եղիցին անզուգական հազուագիւտք 'ի թանգարանս եւրոպացւոցն հնութեց, մինչդեռ զնոյնս դանդաղիմք մեք յաճախել յազգիս:

Եւ այս ամենայն ազգային յիշատակարանացն կորուստ, ամենեքին մեք սիրտ 'ի բերան փղձկեալ, ոչ ևս հանդուրժելով կալ անդէն 'ի զնին, դարձաք յետս. և զառիւլեր ճանապարհին կալեալ ընդ հիւսիս, յուղի անկալք 'ի գեղջէն, ոչ ևս կարացեալ զաւերս եկեղեցեաց հնոյ քաղաքին համբուրել: Եւ զի գիւղաքաղաքն Վառնի, որպէս ասուցաւ, 'ի հովիտս լերանցն զտանէր, անտի մինչև 'ի վանս Վրդից՝ բովանդակ ճանապարհս հանէր ընդ առապարս և ընդ նեղսագոյն անցս քարանց 'ի մացառուտս բլրոց ժամն իբրեւ երկուս. վասն այնորիկ աշխատութիւն ոչ սակաւ կրեցաք յանցանելն ընդ այն, մանաւանդ թէ՛ ընդ բերանն իսկ խորածորոյն: Եւ իբրեւ 'ի բարձրաւանդակ լերինն 'ի վերամբառնայաք, և ահա աւերակք հաւուց թառայ երեւին յայնկոյս 'ի հաւասար բարձրութեանն անմատչելի լեռամբք և բլրովք: Աւտիւք մաղթեի համբուրել զյիշատակս մեծի Մագիս.

տրոսին<sup>1</sup>, և զերեսս 'ի հող մածուցանել յապաստանարանս երջանիկ մերոց նախնեաց՝ յառուրս վերջին հալածանաց ( ահաբասայ և Վիրգիլնայ և այլոց անօրինելոցն յառաջագոյն . որք հեղին զարիւնս շուրջ զԱրուսաղէմաւ , և ըզմարմինս սրբոց՝ գազանաց երկրի . և իջանել մի մի 'ի դերբուկան , յորս քրտունք երեսաց նոցին յորդահոս 'ի վաստակնս առատանային . և աղօթաւորաց յաստուածիջեան տեղիս՝ արտասուք եռանդունք հոսեալք ընդ անկումն ազգային գլխապետութեան . ընդ նախարարացն գերութիւնս և ընդ չուանս թափառականս որդւոց Հայաստանի ընդ ծագս տիեզերաց . յորոց բազումք առ երկիւղին դարանաղօղ իբրեւ յանկաստանի ընդ թուիս լերանց ընդ սարս և ընդ ձորս անջրդի ափափայ քնալով , գոհար անձանց ևեթ զգուշանային , անարեւ զառուրս ոչ սակաւ ստուերանիստք լեալ յեց արմկամբք 'ի լանջս քարանց . որոց հազիւ ուրեմն տեսեալ առ վայր մի զպակասել ելուզակացն սրիկայից , եկեղեցանային առ 'ի պիտոյս հողւոր պաշտօնիցն պաշտամանց , ուր և առ հարկի սրբոց խորհրդոց զանմահ յիշատակն կանգնէին . իւրեանց ձեռագործաց՝ ինքեանք լեալ մշակք . ապա թէ ոչ՝ զիմրդ հնար էր նոցին յայնպիսի վայրսն օթանալ և աստուածայնոցն պարապել շինութեանց , ուր ոչ ջուր ընթացական , և ոչ այնօրինակ դիւրաբեկանուտ վէմք իսկ , որպիսի տաճարացն են կազմածք . ընդ որս սքանչանան այցելուք ամենայն՝ ընդ հանել զայնոսիկ յեւելէջն 'ի նիւթ շինութեանց . որպիսի են և Մեքերդոյ և Տեղերու վանացն . որոց առաջին առ կարի դժուարանցիցն ճանապարհաց՝ աւանդի 'ի բնակչաց կայ 'ի ծործորս բարձրաւանդակ լանջացն Մրադածու . թէ և տաճարն ամբողջ ըստ ամենայն մասանց :

Ի յիշատակեալն բարձրաւանդակէ , ուստի Հաւուց թառն երեւցաւ , հե-

տիոտս ընթանայաք մինչև ցմեր ուխտատեղին , ուր ուրեք զառիվայրք ճանապարհաց յապառաժուտան անկանէին . և որչափ 'ի ծոց լերինն ձգէր ուղին նեղանձուկ , այնքան և խորածորն ամփոփէր 'ի վեր կոյս . զի երթալով երթայր և բարձրանայր վայրն . լերինք երկուստեք մերձենային 'ի կցուրդն , յորոց Մշասն այն գետանայր գետ . յայսմիկ բարձրաձեռն ընդ պտոյտս ինչ անցիցն 'ի ներքս անցեալ , և ահա ցանկալին մեր երեւցոյց 'ի վեր զգագաթ գմբէթի իւրոյ 'ի շրջապատ պարիսպս իւր 'ի մէջ քարանցն սեպացելոց իբրեւ զբաւիղս բաշացեալ 'ի վերայ , և 'ի մէջ մայրեացն և մացառաց անտառախիտ ծառոց . յերբորդ ժամու աւուրն ժամանեալ անդր 'ի վանս , իսկ և իսկ խոնարհեցաք 'ի համբոյր ուխտին . և 'ի զնին վիմափոր տաճարացն , ուր Մարեվանքն է 'ի բլուրն քարեղէն :

Լիկեղեցին Մարեվանաց և առաջին 'ի տաճարս անդ , է առանց սեան . ոչ կարի ընդարձակ . ունի զսրածայր կաթուղիկէ որոյ խաչն անկեալ և սակաւ հերձուած 'ի վերուստ . ուստի և տաշածուքարինք ինչ հոսեալք արտաբուստ 'ի ծայրէն : ( Երկուց կողմանց սեղանոյն են մի մի խորանք հանդերձ վերնաւ տամբք , յորս ելանեն 'ի սեղանոյն . այսպիսի վերնատունք գոն յաջ և յահեակս գրանն արեւմտեան , հանդէպ առաջնոցն . և 'ի միջոցս երկուցն՝ վերնայարկ սիւնազարդ , և սանդուղք քարեայք հիւսեալք յերկուց կուսէ յորմն , ընդ որս ելելէջք վերնայարկին . այս դուռն արեւմտեան հանէ ընդ մէջ ժամատանն զոր սովորութիւն եղև 'ի միջին դարու զոյդ ընդ եկեղեցեաց կառուցանել . իսկ դուռն հարաւային հայի 'ի մէջ պարլսպին :

Դամատունն ( դրսի տաճար ասացեալ 'ի ստորագրութեանն ) մեծադիր քան զեկեղեցին՝ կից նմին կառուցեալ է 'ի վերայ չորից միահատոր սեանց , 'ի բաց առնլով զխարիսխս , որք են կարի թանձր վեց թզաչափ բարձրութեամբ . կամարքն չորեքին որ 'ի վերայ սոցա՝

<sup>1</sup> Գրիգոր Մագիստրոս կառուցանէ զտաճարս զայս 'ի Հաւուց թառ յամի 1013 . յորում լեալ է եկեղեցի յառաջագոյն :

Հաւաքեալ վերուստ 'ի բոլորակ մի, և բովանդակ ընտիր քանդակագործ մինչ 'ի կիսաբոլորս գմբէթին . ուրանօր է լուսամուտն մեծ բոլորչի՝ յարեւելից նուրա 'ի տանիսն՝ կանգնեալ է սիւնազարդ փոքրիկ զանկակատունն, անյիշատակ մնացեալ 'ի ստորագրութեանն, մերձ 'ի մեծ կաթուղիէն . հիւսիսային որմն՝ է վէմն միապաղաղ, յոր եկեղեցիքն փութուածոյք . և այս վէմ ամպագոյն՝ է երակ ինչ լերինն յառաջացեալ յարեւմտից նորին՝ ընդ հիւսիսակողմն եկեղեցւոյն բարձր քան զնա երկիցս . յորոյ վերայ ձգին արեւմտեայ հիւսիսային որմունք պարսպին . ըստ երեւութին է իբր բլուր մի, այլ այնքան ահագին, յորում իբրեւ 'ի յայրի ձեւացեալ են տաճարքն չորեքին զարմանագործք . երեք 'ի ներքոյ 'ի հաւասարութեան ժամատանն, և չորրորդն մեծ քան զերեսին ևս՝ 'ի վերայ նոցա 'ի մի և 'ի նոյն վիմի փորուածք : Ամատունն յար և նման է Յովհաննավանաց ժամատան . շինութիւն սորա՝ է յամին 1214 :

Բաղին տաճարն փորածու միջակ մեծութեամբ 'ի վիմին՝ ունի վէմ և սեղան հանդերձ միով խորհրդանոցաւ . և լուսամուտ մի 'ի հարաւոյ տանեաց . դուռն սորա կից արեւմտեայ դրան ժամատանն և ոչ 'ի միջի նորա : Հերկայնութեան նորա է խորանաձեւ տեղի 'ի հիւսիսոյ նմանապէս փորուած . զուցէ առ յարմարելոյ զմիւս փորուածսն . յաջակողման դասուն ելանէ ջուր ականաւ կիտ, այլ անախորժ, ուստի առնուն ուխտաւորք . որ վերստին 'ի նմին տեղւոյ ստորասուզեալ անյայտանայ ընդ յատակս եկեղեցւոյն : Ի վերայ հիւսիսային որմոյն քանդակեալ են առիւծք երկու դէմ 'ի դէմ շղթայակապ . յորոյ վերայ արծուի սաւառնեալ՝ ունի 'ի միոյ թիկանցն : Բայ տաճար յիշատակ է Պաօլ իշխանին՝ ըստ արձանագրութեան 'ի ստորագրութեանն :

Ինդ հիւսիսային որմն ժամատան մերձ 'ի սեղանն՝ է դուռն երկուց փոքրիկ տաճարացն 'ի վիմին՝ նոյնպէս փութուածոյք . որք ըստ առաջնոյն ունին

զբեմ, զսեղան և զմի մի լուսամուտ 'ի վերուստ, յորոց սկսեալ են փորուածքն : Սորա չունին զարձան յիշատակի :

Իսկ չորրորդ՝ կամ լաւ ևս առաջին վիմափոր տաճարն ըստ մեծութեան՝ է 'ի տանիս երից ստորագրելոցն, 'ի կիսաբաժնի վիմին . դուռն է յարեւմտից կուսէ վիմին մեծի՝ յարտաքին պարսպէ վանացն . ձեւացեալ 'ի վերայ չորից խարըսխաւոր սեանց 'ի նոյն միակտուր վիմէն կամարաձիգ յօրինուածովք, այլ առանց դրուագաց . միջին կեդրոնն, ուր և կամարագլուխքն միանան, հաւաքեալ է սրածայր, և բացեալ է բոլորաձեւ լուսամուտն մեծ, որ այն ինքն է ծայր բլրոցն . և որպէս երեւի, իբրեւ առաջնոյն՝ աստի սկսեալ է փորուած տաճարին, զի և առ մեծք իսկ աւանդութեամբ գիտեն : Եւ իբրեւ զայլոցն չունի բեմ և սեղան, այլ զմի և նոյն հաւասարութիւն յամենայն կողմանս յատակին, և զձե քառակուսի . այնքան ընդարձակ, մինչև ընդ սովաւ պարունակիլ երից ներքնայարկեան տաճարաց : Եւ այս յիշատակ է որդւոյ Պաօլ իշխանի՝ Պապակ անուն, և ամուսնոյ նորա Բուզուքանայ, յամին 1288 . այս ինքն եօթանասուն և չորս ամբք յետոյ քան զշինութիւն ժամատանն :

Ի մնացորդս վիմին 'ի հարաւոյ և յարեւելից փորեալ են մատրունք 'ի հաւասարութեան վերնոյ տաճարին . են այսպիսիք և 'ի հիմունս վիմին մեծի սեպացելոյ յարեւմտից, որպէս ասացաւ, 'ի վերայ մենաստանին . բաժանեալ 'ի վերին և 'ի ներքին յարկս . յորս ձեւացեալ են յարեւելից վէմքարինք և սեղանք փոքրիկք . հազիւ պարունակին 'ի սոսա անձինք հինգ :

Տա յիշատակ վանացն Բյորից, դուցէ և այսպէս անուանակոչելոյ նորա . այլ թէ որո՞ւմ 'ի տաճարաց աստի տըւեալ է անունս 'ի չորրորդ դարու, չէ յայտնի յարձանագրացն . զի առաջին տաճարն ընդ ժամատան ունի զարձան յիշատակի շինութեան յամին 1214 . յաւուրս Օպքարիայ սպասալարի . ըստ որոյ երեւի թէ՛ երկոքին փորուածու

տաճարքն փոքունք միայն լեալ են յառաջագոյն՝ կացուրդ սրբոյն Սահակայ՝ ի յիշատակեալն դարու . զի նոքին միայն են անյիշատակագիրք , որոց և պատշաճեալ անունս Այրեւանք :

Ի այց թէ յետ ժամանակաց զանուն ընկալաւ և Վեղարդայ վանք , այս անտի է յայտ՝ զի Վեղարդն սուրբ պահիւր ընդ ժամանակս բազումն աստէն ըստ բազմաց վկայութեանց , որպէս ի ստորագրութեանն :

Վարիսպ մենաստանիս հաստատուն և բարձր շինութեամբ՝ է ի ձեռքառուսի . արեւմտեան կողմն կից է սեպացելոյ վիմին , ուր է և դուռն մեծ . իսկ փոքրն՝ յայն կողմն պարսպին , որ ձգեալ է ի վերայ բլրոցն : Սենեակք ի հարաւային և յարեւելեան կուսէ եկեղեցոյն՝ են բոլորովին քարաշէնք հաստատունք : Ի հիւսիսոյ՝ խաղայ ընդ մէջ պարսպին ջուր ականակիտ բերեալ ի գետոյ անտի , և անցեալ յառաջոյ սենեկացն , անկանի ի նոյն գետ :

Այս վանք է Վեղարդայ , ի ծանօթութեանն համարեալ Աղուարդ , և աւերակ՝ որ ոչ է աւերակ . զի ունի զԱռաջնորդ և չափաւոր պաշտօնեայս տաճարի , որպէս և Խորվիրապն . և հեռի է սա Աղուարդայ տեղեալ , և յատկութեամբ գեր ի վերոյ քան զմենաստան նորա . սակա որոյ և ի հաւաստել զսոյն ապացուցութիւն , զնեմք և զստորագրութիւն եկեղեցոյն Աղուարդայ՝ և առ նովաւ մենաստանին , վաղուց զառձեռն պատրաստեալն ընդ ստորագրութեանց վանաց Բնբերդոյ և Տեղերու յիշելոցն ի վեր անդր :

Աղուարդ գիւղ ի հիւսիսոյ Աջմիածնի յարեւելս Կարբւոյ՝ ընդ մէջ Վասաղ և Նրազդան գետոց հուպ լերին Բրայի . ունի եկեղեցի եռայարկ՝ տաշածու քարամբք շինեալ յամին 1321 , ըստ արձանագրութեն՝ յորում չիշատակին կառուցանողք : Ի յարկն առաջին՝ գոյ մի սեղան պատարագի . միջինն ևս զնոյն ունի . իսկ վերնայարկն՝ սիւնազարդ կաթուղի կէիւ . յարեւելց սորա կից սմին շինեալ են բնակիչք զժամատուն ընդարձակ :

Այլ Աղուարդայ վանքն ըստ արեւելց կուսէ դաստակերտին ըստ Վրասահոսկերտցոյն , կիսոյ ժամու հեռաւորութեամբ ի գեղջեն՝ շինեալ է ի Վրիգորէ Սամիկոնեանն իշխանէ . ձեռեկեղեցոյս է բոլորակ ութանկիւն , և է անսիւն . ի միջավայրի յարկին գոյ գրմբէթ կիսաւեր . դուռնք են նմա յարեւմտից և ի հարաւոյ :

Սենաստանն զնովաւ է աւերակ . որոյ և յարեւմտից հարաւոյ՝ հետք շինութեանց սենեկաց . ի հիւսիսակողմն եկեղեցոյն է հանգստարանն . յորում և որոցաձեւ մատուռն փոքրիկ :

Այս մենաստան Աղուարդայ հեռի է ի Վեղարդայ վանաց գրեթէ ութ ժամու հեռաւորութեամբ . յորոց միջոցի անցեալ Նրազդան գետ , բաժանէ զԼոտայց գաւառ ի դաշտավայրացն Աղուարդայ . որոյ ծայր ձգի մինչ ցեղերս Բրարատեան դաշտին ի հիւսիսոյ , ունելով յարեւմտից իւր՝ որպէս ասացաւ , զՎասաղ գետ : Իսկ Սողնին՝ ի ներքոյ :

Սողնի է անուն գեղջն , ուր է մենաստան սրբոյն Վեորգայ՝ սեպհական կալուածք Աջմիածնի . մեկուսի ի Աղարշապատայ՝ երկոյ ժամու հեռաւորութեամբ ընդ հիւսիս ի վերայ խորածորոյն Վասաղ գետոյն յարեւմտից . մերձ յայս մենաստան են ի հիւսիսոյ Յովհաննավանք և Կարբի ի հանդիպոյ միմեանց :

Իսողով զստորագրութիւն վանացս այլում ժամանակի՝ միայն զպատճառ անուանակոչութեան գեղջն առնումք քաղուածու ի Օաքարիայ սարկաւազէ Յովհաննավանաց ի ժամանակակցէ Վավրիթեցոյն . որ զպատճառ շինութեան սրբոյն Վեորգայ վանաց յիշելով մերձ ի նոյն գիւղ ասէ , « Սողն մի հեռի ի Յովհաննավանաց՝ առաջնորդք նոյն վանաց՝ շինեցին զսուրբ Վեորգ . որով անուն գեղջն կոչեցաւ Սողն , այժմ Սողնի . և եղին անդ զմասունս սրբոյն . զի մի ուխտաւորք ի գալստեան ի Յովհաննավանս , ուր էր մասունքն զառաջինն , վտանգեցին ընդ զառի ի վայրս »

խորաձորոյն , յոր գահալիժէին յառաջագոյն բազումք առ կարի բաղմունք են ,

Ողորմած տէր , առաքելով առ յարգութիւնդ զայս դոյզն իմ բանագրութիւն , մաղթեմ առ 'ի տեղեկութիւն հաղորդել զայն եղբարց սրբոց հրատարակողաց խաղմովիսին . յորոց ակն ունիմ եթէ այսու ևս շարժեցոյն զսիրտ ազգայնոց 'ի սէր հայրենեացն հնութեանց , և մշտնջենաւորեցոյն զայսօրինակ յիշատակս նախնեաց 'ի գիրս և 'ի վէպս . ըստ որոյ և ձեզ որ առաւել հայրենասէրս տեսանեմ և ցանկացող ազգային յիշատակաց տակաւին երևելոյ յաշխարհի մերում , ըղձանամ յամենայն սրտէ զբարօրութիւն և զերկարութիւն կենաց ժամանակի և ևս 'ի ցանկալ և հայրենասիրել . մնալով ձեզ ջերմեռանդ

Ղօթարար 'ի Կեր

Խ . Ծ

ԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պալարի Գլխոյ Վարազ .

ՊԱԼԱՐԻ գլխոյ վարազը սովորական վարազներուն տեսակներէն կը տարբերի գլխոյն այլաձևութեամբը : Սարմնոյն երկայնութիւնն է 4 ոտնաչափ , բարձրութիւնը առջևի կողմէն 2 ոտնաչափ , իսկ ետևի կողմէն 2 բթաչափ պակաս : Վրովսը ուրիշ խողերու համեմատութեամբ շատ տձև և խոշոր է . մէկ գլխաւոր տարբերութիւնն ալ է վերին ծնօտիցը ժանիքներուն մեծութիւնը , որ աւելի եղջիւրի նմանութիւն ունին քան թէ ժանեաց , և ցուլերու եղջեր նման ետք դարձած են , ասոնց երկայնութիւնը կէս ոտք կ'ըլլայ . քիթն ալ տափակ ու խիստ կարծր , ծայրը շարժուն , ծակերը այնչափ իրարմէ հեռու , որ չեն ալ երևնար բայց եթէ

երբոր գլուխը վեր վերցնէ . ծամելիքն ալ չափէ դուրս լայն են . վերին շրթունքը կարծր , հաստ և դէպ 'ի վար կախուած է . միայն սեղանատամունք ունի , անոնք ալ ներսի կողմէն քթին խիստ մօտիկ են : Կանջները շատ մեծ են , և աւելի կտր քան թէ երկայն , որոնց ներսի կողմը դեղին բուրդով ծածկուած է : Էջուրները պզտիկ են գլխուն համեմատութեամբ , և իրարու ու ականջներուն մօտիկ . սովորական խողերուն աչքերէն աւելի՝ աչքերնուն տակը երկու բթաչափ կամ քիչ մը աւելի մեծ աճառէ պարկի պէս մասեր կան , որոնք տեսութեանը արգելք կ'ըլլան , և ասոնց մով ամբողջ գլուխը հրէշ մը կը ներկայացնէ մեզի , որ ինչպէս զրսուանց՝ ասանկ ալ ներքին կաղմութեամբը կը տարբերի ուրիշ խողերէն . և կինձերուն դասին մէջ նոր տեսակ մը կը կազմէ : Բնութեամբ ալ չափէ դուրս թշնամի է մատակ խողերու , որով դարձեալ սովորական ճանչցուած վարազներէն տարբեր տեսակ մը ըլլալը կ'իմացնէ :

Վերակուրն է ամենայն տեսակ ընդեղէն , գարի , մնացորեն և խոտեղէն , բայց ամենէն աւելի կը սիրէ հաճարէ շինուած հացը , և զայս իրեն տուողին քովէն չհեռանար : Վերած ատենը առջևի ոտուրներուն վրայ կը նստի , նոյնպէս նաև ջուրը լակած ատենն ալ , ասոնցմէ զատ շատ անգամ ալ այսպէս ծնկի վրայ նստած կը կենայ :

Սողութիւնը ու հոտառութիւնը սուր է բայց տեսութիւնը տկար , մէյմը աչուրներուն պզտիկութեանը համար , երկրորդ անոնց դրիցը համար որոնք իրեն մեծ արգելք են չորս կողմը եզած առարկայները զանազանելու . և բաց ասոնցմէ՝ վերը յիշուած աչուրներնուն տակի աճառէ պարկերը , որոնք շատերը ուրիշ երկու ականջ կը կարծեն :

Ե կենդանիս թէպէտ և Պալարի գլխոյ վարազը ըսուել է Վերիկէի այն մասին մէջ աւելի գտնուելուն համար , բայց կը գտնուի նաև Վարեյուսոյ գլխոյն զանազան կողմերն ալ :